Digital Democracy Initiative

Առաջադրանքի տեխնիկական նկարագիր
Թվային բովանդակության և առցանց ուսուցման փորձագետ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Փորձագետը կմշակի 5 հայալեզու կրթական միկրո-մոդուլ Google Classroom հարթակում դասընթացի համար: Բովանդակությունը կենտրոնանալու է թվային անվտանգության, մեդիագրագիտության և առցանց իրավունքների թեմաների վրա՝ Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի երիտասարդների և կանանց համար:

Ժամանակահատված - Հունիսի 1 - Հունիսի 25, 2026թ.

Վայրը ՝ հեռավար

Աշխատանքային կապեր՝ ծրագրի համակարգող, «Մենք» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ծրագրի և բովանդակության մշակում. Մշակել 5 կառուցվածքային «Միկրո-մոդուլներ»՝ հարմարեցված Google Classroom-ի միջոցով բջջային հեռախոսներով ուսուցման համար.

- Թվային հիգիենա և գաղտնիություն՝ գործնական քայլեր տվյալների պաշտպանության և սոցիալական մեդիայի անվտանգության համար:
- Պայքար կիբեր-բռնության դեմ՝ կիբերբուլինգի (առցանց հալածանքների), ոտնձգությունների և ատելության խոսքի նույնականացում և արձագանքում:
- Մեդիագրագիտություն և փաստերի ստուգում (Fact-Checking)՝ Հայաստանյան թվային տիրույթում ապատեղեկատվության բացահայտման գործիքներ:
- Թվային իրավունքներ և էթիկա՝ առցանց հաղորդակցության իրավական և էթիկական շրջանակները Հայաստանում:
- Հզորացման գործիքներ՝ թվային հարթակների կիրառում համայնքային անվտանգ շահերի պաշտպանության և ակտիվության համար:

Ուսումնական գործիքների ստեղծում. Պատրաստել 5 ինտերակտիվ թեստ (յուրաքանչյուրը՝ 10 հարցից)՝ մասնակիցների առաջընթացը գնահատելու համար:

- Մշակել 5 գործնական առաջադրանք (Action Assignments)՝ հմտությունների գործնական կիրառման համար:

- Պատրաստել 5 բազմակի օգտագործման թվային ստուգաթերթեր (Checklists) և ինֆոգրաֆիկաներ՝ սոցիալական մեդիայում տարածելու համար:

Տեխնիկական ներդրում. Ստեղծել և կառուցվածքավորել Google Classroom միջավայրը Միկրո-Ակադեմիայի համար:

- Ներբեռնել և կազմակերպել բոլոր ուսումնական նյութերը (սլայդներ, տեքստեր, տեսանյութեր) :
- Անցկացնել կարճ տեխնիկական կողմնորոշման հանդիպում (orientation) 10 տարածաշրջանային առաջնորդների համար :

Համապատասխանություն և տեսանելիություն: Ապահովել, որ բոլոր նյութերը համապատասխանեն ծրագրի պաշտոնական տեսանելիության և բրենդավորման կանոններին:

- Ապահովել բովանդակության մատչելիությունը (հասանելիությունը), գենդերային զգայունությունը և հարմարեցվածությունը թվային հիմնական հմտություններ ունեցող մասնակիցների համար:

Գործունեության հիմնական ցուցանիշներ (KPIs)

- **Միկրո-Ակադեմիայի ուսումնական պլան**. Վերջնականացված ծրագիր և ուսումնական նպատակներ 5 մոդուլների համար:
- **Ուսումնական փաթեթ**. Թվային սլայդների, տեքստերի և թեստերի ամբողջական հավաքածու հայերենով:
- **Մասնակցի գործիքակազմ**. Թվային անվտանգության վերաբերյալ 5 բարձր ազդեցության ինֆոգրաֆիկա/ստուգաթերթ:
- **Հարթակի պատրաստում**. Լիովին ֆունկցիոնալ Google Classroom միջավայր՝ պատրաստ սովորողների ընդունման համար:

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մասնագիտական աշխատանքային փորձ թվային բովանդակության մշակման, էլեկտրոնային ուսուցման (e-learning) կամ ոչ ֆորմալ կրթության ոլորտում:
- Խորացված գիտելիքներ կիբերանվտանգության, մեդիագրագիտության կամ թվային իրավունքների ոլորտում:

- Google Classroom-ի և թվային դիզայնի գործիքների գերազանց տիրապետում:
- Ինքնուրույն աշխատելու և ծրագրի խիստ վերջնաժամկետներին (deadlines) հետևելու կարողություն:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հետաքրքրված անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Ինքնակենսագրություն (CV) և նախկինում պատրաստված կրթական կամ թվային բովանդակության աշխատանքների հավաքածու (Portfolio):
- Համառոտ ֆինանսական առաջարկ:

Փաստաթղթերը պետք է ուղարկել info@weyouth.am էլեկտրոնային հասցեին՝ նամակի թեմա (Subject) դաշտում պարտադիր նշելով **«Digital Content and E-Learning Expert - Safe to Speak Online»**:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2026 թվականի մայիսի 25-ը, աշխատանքային օրվա ավարտը: